ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, ապացույց պահանջելու և դատական նիստ նշանակելու մասին

ԵԴ2/4326/02/24 ք. Երևան
6 Հունիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արտուշ Ավագյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/4326/02/24 քաղաքացիական գործով ըստ հայցի «Մ. Բուատ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 16.05.2024թ. Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության գլխավոր քարտուղարի կողմից «Մ.Բուատ» ՍՊԸ-ի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության միջև 31.08.2022թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ԲՄԱԾՁԲ-2022/5Ս-1 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք «Մ.Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության գլխավոր քարտուղարի 24.05.2024թ. թիվ 1127-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու, դատական նիստ նշանակելու և ապացույց պահանջելու մասին հարցերը

ՊԱՐԶԵՑ

«Մ. Բուատ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 16.05.2024թ. Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության գլխավոր քարտուղարի կողմից «Մ.Բուատ» ՍՊԸ-ի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության միջև 31.08.2022թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2022/5Ս-1 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք «Մ.Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության գլխավոր քարտուղարի 24.05.2024թ. թիվ 1127-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է 31.05.2024թ.-ին, իսկ դատավոր Արտուշ Ավագյանին մակագրվել է 03.06.2024թ.-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանները հատուկ հայցային վարույթներն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Դատարանը, ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն և գտնում է, որ այն ենթակա է վարույթ ընդունման և հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով գնումների հետ կապված վեճերով վարույթների համար նախատեսված առանձնահատկությունները, Դատարանը գտնում է նաև, որ միաժամանակ անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցները:

Անդրադառնալով գործը դատական նիստում քննելու հարցին, դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ, ուստի նման հանգամանքների առկայությամբ պայմանավորված, Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է գործը քննել դատական

նիստում:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 201-րդ, 202-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑ

1. «Մ. Բուատ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 16.05.2024թ. Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության գլխավոր քարտուղարի կողմից «Մ.Բուատ» ՍՊԸ-ի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության միջև 31.08.2022թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2022/5Մ-1 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք «Մ.Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության գլխավոր քարտուղարի 24.05.2024թ. թիվ 1127-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:
2. Գործը քննել հատուկ հայցային վարույթի կարգով:
3. Պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պահանջել ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2022/5Մ-1 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
4. Որոշման նախորդ՝ 3-րդ, կետում նշված ապացույցները պատասխանողի կողմից պետք է ներկայացվեն սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
5. Գործը քննել դատական նիստում, այն նշանակել՝ 28.06.2024թ.
ժամը 15:00-ին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայրում՝ ք.Երևան, Հրաչյա Ներսիսյան 10 հասցեում, թիվ 10 դատական նիստերի դահլիճում:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արտուշ Ավագյան

Digitally signed by
ARTUSH AVAGYAN 2601940050
Date: 2024.06.06 10:48:16 mID

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am